

Newsletter

Delegation of the European Union to Armenia

May/June 2011 #3(8)

Focus On/խոշոր պլան

Europe Day 2011



On 21 May Armenia celebrated Europe Day. Commemorating the occasion on which Robert Schuman, the French Foreign Minister back in 1950, first proposed the concept which evolved into today's European Union, Europe Day is one of the main EU symbols.

"Today we celebrate the European Union's birthday. We began fifty years ago with six members, and today we have 27 states, building together responsibilities and policies. Europe is a good example of cooperation and integration. Europe is also an example of reforms which bring prosperity and peace. Today Europe helps Armenia to build its future", said the Head of the EU delegation to Armenia, Ambassador Raul de Luzenberger, on the occasion of Europe Day.

For the fifth year in a row, the EU Delegation to Armenia organised a number of events to note this symbol of the European Union. The main celebrations for the public were held on 21 May. The day started with an Information Fair, during which achievements of Armenia-EU cooperation were presented by nearly 30 local and international organisations. Guests were introduced to EU funded projects in the sphere of human rights, democracy, economy, wildlife preservation, education and other areas. Participating projects included the EU Advisory Group, ENPI FLEG, Tempus and many others.

Youth was drawn to the event as well. "I have always thought about continuing my education

in European educational establishments. Now my determination is more resolute", said 20-year-old Naira at the Erasmus Mundus educational tent. According to Raul de Luzenberger, some of the best results are being achieved by EU programmes implemented in the sphere of education: "Educational levels of Armenian students are those of European students, and Armenians can study easily in Europe".

The results of the youth video contest entitled "My Europe in 120 Seconds", which had been announced by the EU Delegation during the day. The contest was aimed at revealing how young people perceive Europe and how they creatively express their thoughts about EU-Armenia cooperation. Lusine Kirakosyan, whose video won the competition, received an Apple iPad.

Through cultural activities guests had numerous opportunities to experience Europe. Starting from practicing Greek and Scottish dances, participating in a Polish wycinanki handicrafts workshop or enjoying a short theatrical play in French performed by Armenian children, Lovers' Park had turned into an interactive presentation of Europe. The conclusion of the celebrations was a joint concert with a fusion of Balkan, Armenian and Italian folk music.

The EU Delegation also held its traditional gala concert to mark Europe Day in Aram Khachaturian Philharmonic Hall on 28 June.



Եվրոպայի օր - 2011

Այս տարի մայիսի 21-ին Հայաստանը նշեց Եվրոպայի օրը: Այն ԵՄ կարևորագույն խորհրդանշերից մեկն է, որը հիշեցնում է այն իրադարձությունը, երբ հեռավոր 1950 թվականին Ֆրանսիայի նախկին արտգործնախարար Ռոբերտ Շումանն առաջին անգամ բարձրաձայնեց մի գաղափար, որը զարգանալով վերածվեց ներկայիս Եվրոպական միության:

«Այսօր մենք տոնում ենք Եվրամիության ծննդյան օրը: Մենք սկսեցինք հիսուն տարի առաջ, երբ Եվրամիության կազմում ընդամենը վեց երկիր կար, իսկ այսօր ԵՄ կազմում են 27 պետություն, որոնք համատեղ մշակում են թե՛ քաղաքականությունը և թե՛ կրում պատասխանատվությունը: Եվրոպան համագործակցության և ինտեգրացման լավ օրինակ է: Այն նաև այն բարեփոխումների օրինակն է, որոնք բերում են բարգավաճում և խաղաղություն: Այսօր Եվրոպան օգնում է Հայաստանին՝ կառուցելու իր ապագան», - Եվրոպայի օրվա կապակցությամբ ասաց Հայաստանում ԵՄ պատվիրակության ղեկավար դեսպան Ռաուլ դե Լուզենբերգերը:

Արդեն 5-րդ տարին անընդմեջ Հայաստանում ԵՄ պատվիրակությունը Եվրոպական միության այս խորհրդանշանային օրը տոնում է մի շարք միջոցառումներ կազմակերպելով: Հանրության համար նախատեսված հիմնական տոնակատարությունները տեղի են ունեցել մայիսի 21-ին: Օրը սկսվեց տեղեկատվական քարոզչական ցուցահանդեսով, որի ընթացքում Հայաստան-ԵՄ համագործակցության վերջին նվաճումները ներկայացրեցին շուրջ 30 տեղական և միջազգային կազմակերպություններ: Այցելուները ծանոթացել են մարդու իրավունքների, ժողովրդավարության, տնտեսության, բնապահպանության, կրթության և այլ

ուղղությունում ԵՄ ֆինանսական օժանդակությամբ իրականացվող ծրագրերին: Մասնակիցների թվում էին ԵՄ խորհրդատվական խումբը, ENPI FLEG-ը, Տեմպուսը և շատ ուրիշներ:

Երիտասարդները ևս ներգրավված էին միջոցառման աշխատանքներում: «Միշտ մտածել եմ Եվրոպական որևէ համալսարանում կրթությունս շարունակելու մասին, և հիմա որոշումս ավելի հստակ է», - ասում է 20-ամյա Նաիրան՝ Երազմուս Մունդուս ուսումնական ծրագրի տաղավարի մոտ: Ռաուլ դե Լուզենբերգերի խոսքերով, հատկապես լավ արդյունքներ են տվել ԵՄ՝ կրթական ոլորտում իրականացրած ծրագրերը: «Հայ և Եվրոպացի ուսանողների գիտելիքների մակարդակը գրեթե նույնն է, և հայերը կարող են հեշտությամբ սովորել Եվրոպայում»:

ԵՄ պատվիրակության կողմից նախապես հայտարարված «Իմ Եվրոպան 120 վայրկյանում» խորագրով տեսահոլովակի երիտասարդական բաց մրցույթի արդյունքները ևս հայտարարվեցին այդ օրը: Մրցույթի նպատակն էր բացահայտել երիտասարդների՝ Եվրոպայի վերաբերյալ կարծիքները, խրախուսել ստեղծագործաբար մոտենալու ԵՄ-Հայաստան համագործակցության հարցերին, արտահայտելու իրենց զգացողությունները: Հաղթող ճանաչված տեսահոլովակի հեղինակ Լուսինե Կիրակոսյանին համընթաց խոստացված նվերը՝ Apple iPad-ը:

Մշակութային միջոցառումների հետ մեկտեղ ներկաները հնարավորություն են ունեցել ծանոթանալու Եվրոպային՝ փորձելով հունական ու շոտլանդական պարեր, հաղորդակցվելու թղթերից նախշեր ու կերպարներ կտրտելու լեհական արվեստին, վայելելու հայ երեխաների բեմականացմամբ ֆրանսերեն թատերական ներկայացումը: Սիրահարների այգին վերածվել էր Եվրոպան ներկայացնող ինտերակտիվ դաշտի: Տոնախմբությունը եզրափակվեց բալկանյան, հայկական և իտալական ազգային նվագարանների համատեղ մեծ համերգով:

ԵՄ պատվիրակությունը Եվրոպայի օրը նշեց նաև հունիսի 28-ին Արամ Խաչատրյանի անվան ֆիլհարմոնիկ դահլիճում՝ կազմակերպելով արդեն ավանդական դարձած գալա համերգ:

Հաղորդագիր

Եվրոպական միության պատվիրակությունը Հայաստանում

Մայիս/հունիս 2011 #3(8)

EP President Jerzy Buzek in Yerevan

The President of the European Parliament (EP), Jerzy Buzek, visited Armenia on 18 May 2011. During a joint press conference with the Chairman of the National Assembly of Armenia, Hovik Abrahamyan, Buzek expressed optimism about the present level of cooperation between Armenia and the EU: "The citizens of Armenia and the

EU are living in a common home - Europe. We believe that the best way to prosperity is democracy, the priority of human rights and a market economy." Chairman Abrahamyan also noted that cooperation between Armenia and the EU had grown in recent years. He confirmed that European integration was one of the foreign policy priorities of Armenia.



ԵՄ նախագահ Երթի Բուզեկը Երևանում

2011 թ. մայիսի 18-ին Երևանում էր Եվրոպայի խորհրդի նախագահ Երթի Բուզեկը: Աժ նախագահ Դովիկ Աբրահամյանի հետ համատեղ ասուլիսի ժամանակ Բուզեկը լավատեսորեն արտահայտվեց Հայաստանի և ԵՄ-ի համագործակցության ներկայիս մակարդակի մասին: «Հայաստանի և Եվրամիության քաղաքացիները ապրում են մեկ ընդհանուր տան մեջ՝ Եվրոպայում: Մենք հավատում ենք, որ բարգավաճման

լավագույն ճանապարհը ժողովրդավարությունն է, մարդու իրավունքների գերակայությունն ու շուկայական տնտեսության զարգացման ապահովումը»: Իր հերթին, Հայաստանի Աժ խոսնակ Հ. Աբրահամյանը նշեց, որ վերջին տարիներին Հայաստանի և ԵՄ-ի համագործակցությունը խորացել է: Նա հաստատել է, որ Եվրոպային ինտեգրվելը Հայաստանի արտաքին քաղաքականության գերակա խնդիրներից է:

Events/Իրադարձություններ

From Cooperation to partnership

A seminar on 'The Role of the European Union in the South Caucasus from Cooperation to Partnership Through Reforms: Challenges and Opportunities' took place in Yerevan State University on 12 May 2011. Young students of international relations had the opportunity to get acquainted with the development of EU-

Armenia relations with the help of specialists involved in the process. Deputy Foreign Minister Karine Ghazinyan, the Director of the Caucasus Institute Alexander Iskandaryan, the Head of the EU Delegation to Armenia Raul de Luzenberger, UNDP Resident Representative Dafina Gercheva and others participated in the event.



Համագործակցությունից՝ գործընկերություն

2011 թ մայիսի 12-ին Երևանի պետական համալսարանում տեղի ունեցավ «Եվրամիության դերը Հարավային Կովկասում. համագործակցությունից դեպի գործընկերություն՝ բարեփոխումների միջոցով. մարտահրավերներ և հնարավորություններ» խորագրով սեմինար: Երիտասարդ միջազգայնագետները հնարավորություն ունեցան ծանոթանալու ԵՄ-Հայաստան հարաբերությունների զարգացումներին՝ լսելով այդ

գործընթացում անմիջականորեն ներգրավված մասնագետներին: Մասնակիցների թվում էին ՀՀ արտաքին գործերի նախարարի տեղակալ Կարինե Դազինյանը, Կովկասյան ինստիտուտի տնօրեն Ալեքսանդր Իսկանդարյանը, Եվրամիության պատվիրակության ղեկավար Կառլ Լուզենբերգերը, ՄԱԶԾ մշտական ներկայացուցիչ Դաֆինա Գերչևան և այլք:

Juvenile justice reform

A project on the "Promotion of Modern Concepts in the Administration of Juvenile Justice in Armenia" began on 19 May 2011 in Yerevan. The 3-year initiative is financed by the EU with implementing partners the Civil Society Institute and the Children's Support Centre Foundation. The overall objective of the project is to promote better understanding and practical application of modern concepts in the administration of juvenile justice in Armenia. The project targets the promotion and protection of interests of the child

in the juvenile justice system and the engagement of the public in keeping juveniles out of the criminal justice system. It also aims to raise awareness about children's rights, promote appropriate legislative reforms and create legal frameworks for local application of international standards in juvenile justice. Target groups of the project include guardian and trusteeship commissions, police staff, juvenile prisons, special education institutions, judges, prosecutors, lawyers, social workers and teachers.

Անչափահասների գործերով արդարադատության բարեփոխում

«Անչափահասների գործերով արդարադատության իրականացման արդիական հայեցակարգերի առաջադրումը Հայաստանում» ծրագիրը մեկնարկել է Երևանում մայիսի 19-ին: ԵՄ կողմից ֆինանսավորվող եռամյա այս ծրագրի գործընկերներն են Քաղաքացիական հասարակության ինստիտուտն ու Հայ օգնության ֆոնդի «Երեխաների աջակցության կենտրոն» հիմնադրամը: Ծրագրի հիմնական նպատակն է քարոզչություն իրականացնել Հայաստանում անչափահասների գործերով արդարադատության

իրականացման արդիական հայեցակարգերի ճանաչման և դրանց գործնական կիրառության նպատակով: Ծրագիրն ուղղված է արդարադատության համակարգին առնչվող երեխաների շահերի պաշտպանության և անչափահասներին քրեական արդարադատության համակարգից դուրս ծառայություններ մատուցելու աշխատանքներում հանրությանը ներգրավելու հարցերին: Խնդիր է դրված բարձրացնել երեխաների իրավունքների վերաբերյալ իրազեկվածությունը և նպաստել օրենսդրական բարեփոխումներին, ինչպես նաև աջակցել անչափահասների գործերով արդարադատության վերաբերյալ միջազգային չափանիշերը տեղում կենսագործելու համար անհրաժեշտ իրավական համակարգի ձևավորմանը: Ծրագիրն ուղղված է խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովներին, ոստիկանության, անչափահասների համար նախատեսված քրեակատարողական հիմնարկների և հասուկ հանրակրթական հաստատությունների անձնակազմերին, դատավորներին, դատախազներին, փաստաբաններին, սոցիալական աշխատողներին և ուսուցիչներին:

Intellectual Property protection awaiting reform

"Society should be able to protect its intellectual rights... The time for serious reform in this sphere has come." These were the words with which the Secretary of the National Security Council of Armenia, Arthur Baghdasaryan, opened the first seminar on the protection of intellectual property and free trade in Armenia. Organised jointly by the EU Advisory Group and the National Security Council, the seminar concentrated on solutions to persisting problems in the Intellectual Property Rights (IPR) field and EU practices. The need for further reform in this area in

Armenia is evident. The country has not yet met its Partnership and Cooperation Agreement obligations to provide adequate protection of IPR at EU levels. Problems include difficult implementation and weak enforcement, as well as a high level of counterfeiting and piracy activities. Today Armenia faces a perspective to start negotiating a possible Free Trade Agreement with the EU when necessary conditions are met. Intellectual Property Rights are among the major priority reforms which Armenia should implement to progress to the next level.



Մտավոր սեփականության ոլորտը սպասում է բարեփոխումների

«Հասարակությունը պետք է կարողանա պաշտպանել մտավոր սեփականության իր իրավունքները... Արդեն ժամանակն է լուրջ բարեփոխումներ անցկացնելու այս ոլորտում»: Հայաստանի ազգային անվտանգության խորհրդի քարտուղար Արթուր Բաղդասարյանն այս խոսքերով է բացել Հայաստանում մտավոր սեփականության և ազատ առևտրի իրավունքների հարցերով առաջին սեմինարը: ԵՄ Խորհրդատվական խմբի և Ազգային անվտանգության խորհրդի համատեղ կազմակերպած սեմինարը կենտրոնացած է մտավոր սեփականության իրավունքների (ՄՍԻ) ոլորտում և ԵՄ փորձի ներդրման հարցում դեռևս առկա խնդիրների լուծմանը: Հայաստանում այս ոլորտի հետագա բարեփոխումների անհրաժեշտությունն ակնհայտ է: Երկիրը դեռ չի կատարել Գործընկերության և համագործակցության համաձայնագրով ստանձնած իր պարտավորությունները՝ չի տրամադրում ՄՍԻ պաշտպանությունը ԵՄ մակարդակով: Առկա խնդիրներից են կիրառման դժվարություններն ու թույլ վերահսկողությունը, ինչպես նաև կեղծումների բարձր մակարդակը: Այսօր Հայաստանի համար հեռանկարային է ԵՄ-ի հետ ազատ առևտրի համաձայնագրի շուրջ բանակցություններ սկսելը, երբ ապահովված կլինեն բոլոր անհրաժեշտ նախապայմանները: Մտավոր սեփականության իրավունքների պաշտպանությունն առաջնահերթ բարեփոխումների կարիք ունի, որոնց իրականացումն էլ Հայաստանին բարեփոխումների հաջորդ մակարդակ անցնելու հնարավորություն կտա:

Fashion without borders

"The Fashion Road: Dialogue Across Borders", a two year collaborative project, began in Yerevan on 4 May. Funded by the European Union, the project is implemented by the association of the European Union National Institutes for Culture (EUNIC). The project will organise masterclasses for participants and discussions on topical issues in the arts sphere. Armenian

and European colleagues will also get acquainted with their respective cultural heritage through a discovery of the history of national clothing. This will be complemented with the creation of fashion shows - working in five separate groups, one Armenian and one European designer will prepare a series of fashion articles. The resulting collections will be exhibited in Armenia and participating European countries.



Նորածնություն՝ առանց սահմանների

«Նորածնության ճանապարհ՝ երկխոսություն սահմանների խաչմերուկում» խաչմերուկում մայիսի 4-ին մեկնարկել է Երևանում: ԵՄ կողմից ֆինանսավորվող այս ծրագիրն իրականացվում է ԵՄ մշակութային ազգային կենտրոնների միության՝ ԵՄ-ՄԱԿ-ի (EUNIC) կողմից: Ծրագրի շրջանակներում մասնակիցների համար կազմակերպվելու են վարպետության դասընթացներ և քննարկումներ՝ արվեստի ոլորտի հիմնախնդիրների վերաբերյալ: Հայ և եվրոպացի գործընկերները կծանոթանան նաև միմյանց մշակութային ժառանգությանը՝ ուսումնասիրելով ազգային տարազների պատմությունը: Այս ամենը կլրացվի նորածնության ցուցադրությամբ՝ մեկական եվրոպացի և հայ նկարիչ-մոդելավորողներից կազմված 5 առանձին խմբերի աշխատանքներով: Արդյունքում ստացված հավաքածուները կցուցադրվեն Հայաստանում և մասնակից եվրոպական երկրներում:

Štefan Füle in Armenia: ongoing reforms discussed

Štefan Füle, the European Commissioner for Enlargement and European Neighbourhood Policy, was on an official visit to Armenia on 29 April to discuss and review ongoing reforms in the country and steps undertaken towards it. During the meeting with Armenian Foreign Minister Edward Nalbandian, the parties touched upon the topics on the European Neighbourhood Policy, projects implemented within the scope of Eastern Partnership as well as consumption of resources, facilitation of easier movement of Armenian citizens within EU member states, and problems within the region, particularly the conflict in Artsakh.



Հտեֆան Ֆյուլեն Հայաստանում. քննարկվել են ընթացիկ բարեփոխումները

Ապրիլի 29-ին պաշտոնական այցով Երևանում էր ԵՄ ընդլայնման և Եվրոպական հարևանության քաղաքականության հարցերով հանձնակատար Հտեֆան Ֆյուլեն՝ Հայաստանում ընթացող բարեփոխումներն ու այդ ուղղությամբ ձեռնարկվող քայլերը քննարկելու և ամփոփելու նպատակով: ՀՀ արտգործնախարար Եվա Բարդինյանի հետ ունեցած հանդիպման ընթացքում կողմերն անդրադարձել են Եվրոպական հարևանության քաղաքականության, Արևելյան գործընկերության շրջանակներում իրականացվող ծրագրերին և դրանց ներուժի օգտագործմանը, ԵՄ երկրներում Հայաստանի քաղաքացիների տեղաշարժի դյուրացման հարցին, ինչպես նաև տարածաշրջանային՝ այդ թվում՝ արցախյան հիմնախնդրին:

FOR A NEW, INNOVATIVE AND AMBITIOUS EUROPEAN NEIGHBOURHOOD POLICY REVIEW

By Štefan Füle, European Commissioner for Enlargement and European Neighbourhood Policy

When Catherine Ashton and I embarked on a review of the European Neighbourhood Policy (ENP) last year, our intention was to put relations with our nearest neighbours at the forefront of EU foreign policy. This is not only because the Lisbon Treaty recognises the special character of the relations with our neighbours, but mainly because the EU's security, economic and political interests, as well as its role as an international actor, are most directly at stake in our neighbourhood. Developments at our borders have a huge influence on our continued prosperity and security.

The Communication on the European Neighbourhood Policy review adopted on 25th May sets out the main priorities of a revitalised ENP strategy. The review has been undertaken following close consultations with all our partners in the East and South and the 27 Member States. We have also consulted parliaments, representatives of civil society, think tanks and other stakeholders: their valuable input has been a source of inspiration throughout the process. This wide consultation strengthens the sense of joint ownership.

The communication builds on the "Partnership for Democracy and shared Prosperity with the Southern Mediterranean" adopted in March 2011 in which we laid out our immediate response to events in the South. It makes concrete proposals on how the work on the Partnership will be taken forward, including in terms of funding. It also looks eastwards. We need to further strengthen the Eastern Partnership, which has helped to consolidate a difficult process of democratic change. The Association Agreements through which partner countries can reach an unprecedented level of convergence with EU laws are at the heart of this process. We need to accompany them on this road based on our shared European identity and values and prepare for a successful 2nd Eastern partnership summit in September in Warsaw.

Our neighbours are changing fast; this is forcing us to change and adapt our policies. However, there is a common theme: citizens across the neighbourhood are demanding democracy, dignity, social development and prosperity evenly shared by all citizens. The new approach to the ENP is based on four directions.

A differentiated Partnership

It is a truism to state that the EU's neighbours are all very different and that the EU's response must be calibrated accordingly, but what does

this mean concretely? In my view, the point of departure is that the area of security and prosperity that we seek to extend to our neighbourhood must be built on democratic values, the rule of law and the respect of human rights. We are ready to go further and faster with those partners who choose the path of reforms based on the universal values we cherish.

A partnership with people

Too often in the past we have privileged relations with those in power over cooperation with civil society. We need to redress the balance. Non-governmental organisations are key actors in promoting democratic and market-oriented reforms, and a thriving civil society is a barrier against authoritarianism because they can hold governments accountable. We propose to support more effectively the development of civil society. We propose to establish a Civil Society Facility which will help civil society organisations develop their advocacy capacity and strengthen their ability to monitor reforms. In addition, we want to develop people-to-people links. We propose to increase funds for developing student exchanges but also measures to facilitate the legitimate mobility of people across EU borders while preserving the security of our citizens.

A comprehensive Partnership

With the entry into force of the Lisbon Treaty, political co-operation between the EU and its immediate neighbours can shift to a higher gear in a number of areas. This means addressing some of the global issues which affect the EU and our neighbours alike: energy security, climate change, the fight against international terrorism and non-proliferation. It also includes tackling security issues that are of most immediate concern to our neighbours – for example how we can help to resolve the protracted conflicts.

A nurtured Partnership

A more ambitious strategy needs increased resources. The Communication proposes to allocate, in 2011-2013, €1.24 billion in grant money to support all the proposed initiatives. This would be in addition to the funds that are already earmarked for our neighbourhood in 2011-2013, which amount to €5.7 billion.

The challenges with which our neighbours are confronted are enormous and the consequences of doing too little too late would be calamitous. We owe it to this and future generations of citizens both in the EU and in our neighbourhood to be up to the challenge.

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՆ ԱՐԴԻ, ՆՈՐԱՐԱՐԱԿԱՆ ԵՎ ՀԱՎԱԿՆՈՑ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

Հտեֆան Ֆյուլե
Ընդլայնման և Եվրոպական հարևանության քաղաքականության հարցերով հանձնակատար

Անցյալ տարի, երբ Քեթրին Էշտոնը և ես հանձն առանք Եվրոպական հարևանության քաղաքականության (ԵՀՔ) վերանայումը, մեր նպատակն էր մերձավոր հարևանների հետ հարաբերությունները մղել ԵՄ արտաքին քաղաքականության առաջնային շարքեր: Եվ պատճառը միայն Լիսաբոնյան համաձայնագրով ամրագրված հարևանների հետ մեր հատուկ հարաբերությունները չէին, այլ այն, որ ԵՄ անվտանգության, տնտեսական և քաղաքական շահերը, ինչպես նաև կառույցի դերը միջազգային ասպարեզում, մեր հարևանությունում կարևոր գործոն են հանդիսանում: Եվրոպական սահմանների մոտ տեղի ունեցող զարգացումներն ահռելի ազդեցություն են ունենում մայրցամաքի բարեկեցության և անվտանգության վրա:

Եվրոպական հարևանության քաղաքականության վերանայման մասին ս.թ. մայիսի 25-ին ընդունված որոշումը սահմանում է նորովի կյանքի կոչված ԵՀՔ ռազմավարության հիմնական առաջնայություններ: Վերանայումը ձեռնարկվել է արևելքում և հարավում գտնվող մեր գործընկերների, ինչպես նաև 27 անդամ-պետությունների հետ խորհրդակցություններից հետո: Մենք նաև խորհրդակցել ենք խորհրդարանների, քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների, գիտական կենտրոնների և շահագրգիռ այլ կողմերի հետ: Նրանց արժեքավոր ներդրումը գործընթացի ողջ ընթացքում ոգևորության աղբյուր է հանդիսացել: Տեղի ունեցած լայնամասշտաբ խորհրդակցությունների փաստն ամրապնդում է համատեղ սեփականության զգացումը:

Սեր հարևաններն արագ են փոփոխվում. այս հանգամանքը ստիպում է մեզ փոխել և հարմարեցնել մեր քաղաքականությունները: Այնուամենայնիվ, գոյություն ունի մեկ ընդհանուր թեմա. հարևանության քաղաքացիները պահանջում են ժողովրդավարություն, արժանապատվություն, սոցիալական զարգացում, բոլորի միջև հավասարապես բաշխված բարեկեցություն: ԵՀՔ նոր մոտեցումը հիմնված է այս չորս ուղղությունների վրա:

Սեր հարևաններն արագ են փոփոխվում. այս հանգամանքը ստիպում է մեզ փոխել և հարմարեցնել մեր քաղաքականությունները: Այնուամենայնիվ, գոյություն ունի մեկ ընդհանուր թեմա. հարևանության քաղաքացիները պահանջում են ժողովրդավարություն, արժանապատվություն, սոցիալական զարգացում, բոլորի միջև հավասարապես բաշխված բարեկեցություն: ԵՀՔ նոր մոտեցումը հիմնված է այս չորս ուղղությունների վրա:

Տարբերակված գործընկերություն

Ավելորդ է մշտել, որ ԵՄ հարևանները շատ են տարբերվում միմյանցից, և որ ԵՄ արձագանքը պետք է համապատասխանորեն հարմարեցված լինի նրանցից յուրաքանչյուրին: Սակայն ի՞նչ է դա իրականում նշանակում: Իմ պատկերացմամբ, մեկնարկային կետ կարող է լինել այն, որ անվտանգությունը և բարեկեցությունը, որ մենք ձգտում ենք տարածել հարևանության ողջ տարածքում, պետք է կառուցված լինեն ժողովրդավարական արժեքների, օրենքի գերակայության և մարդու իրավունքների նկատմամբ հարգանքի վրա: Մենք պատրաստ ենք դեպի առաջ և ավելի արագ շարժվել այն գործընկերների հետ, որոնք ընտրում են մեր փայլալույս համընդհանուր արժեքների վրա հիմնված բարեփոխումների ուղին:

Գործընկերություն մարդկանց հետ

Անցյալում շատ հաճախ իշխանությունների հետ մեր հարաբերություններն ավելի արտոնյալ են եղել, քան քաղաքացիական հասարակության հետ համագործակցությունը: Մենք պետք է շտկենք այս իրավիճակը: Ժողովրդավարական և շուկայամետ բարեփոխումների խրախուսման գործում հասարակական կազմակերպությունները հիմնական դերակատարներն են, իսկ քաղաքացիական ակտիվ հասարակությունն բռնապետական համակարգի խոչընդոտն է, քանի որ նրանք ունակ են իշխանություններից պահանջել հաշվետու լինել: Առաջարկում ենք ավելի արդյունավետ օժանդակել քա-

ղաքացիական հասարակության զարգացմանը: Առաջարկում ենք նաև ստեղծել Քաղաքացիական հասարակության ծառայություն, որը կօգնի քաղաքացիական հասարակության կազմակերպություններին զարգացնել իրենց կարողությունները, ինչպես նաև ամրապնդել բարեփոխումների մշտադիտարկման իրենց հնարավորությունները: Ավելին, մենք ցանկանում ենք զարգացնել միջամտման շփումները: Առաջարկում ենք ավելացնել ուսանողների փոխանակման ծրագրերի զարգացման ֆինանսավորումը, ինչպես նաև ձեռնարկել միջոցներ՝ հեշտացնելու մարդկանց օրինական տեղաշարժը ԵՄ ողջ տարածքում՝ միաժամանակ պահպանելով մեր քաղաքացիների անվտանգությունը:

Համապարփակ գործընկերություն

Լիսաբոնյան համաձայնագիրն ուժի մեջ մտնելու պահից ԵՄ և իր անմիջական հարևանների միջև քաղաքական համագործակցությունը կարող է ավելի բարձր մակարդակի հասնել մի շարք ոլորտներում: Սա վերաբերում է մի շարք գլոբալ ոլորտների, որոնք հավասարապես ազդում են ԵՄ և հարևանների վրա: Դրանք են՝ էներգիայի, անվտանգության, կլիմայի փոփոխության, միջազգային ահաբեկության դեմ պայքարի, ինչպես նաև միջուկային գեներացիայի և արտաբնական ռադիոակտիվության հարցերի լուծում, որոնք մեր հարևանների խնդրո առարկան են, օրինակ ինչպես կարող են նրանք հարթել տևական հակամարտությունները:

Մնուցված գործընկերություն

Ավելի հավակնոտ ռազմավարությունը ռեսուրսների կարիք ունի: Որոշումն առաջարկում է 2011-2013թթ. համար տրամադրել 1.24 միլիարդ եվրոյի դրամաշնորհ՝ որպես աջակցություն առաջարկվող նախաձեռնություններին: Սա կլինի ի հավելումն 2011-2013թթ. հարևանության համար արդեն իսկ նախատեսված գումարին, որը կազմում է 5.7 միլիարդ եվրո:

Մեր հարևանների առջև ծառայած մարտահրավերները բազում են, և ոչ ժամանակին արված ոչ բավարար գործողությունների հետևանքները կարող են կործանարար լինել: Մենք կրում ենք այս պարտավորվածությունը, և ԵՄ և մեր հարևանության ապագա սերունդները պետք է պատրաստված լինեն այս մարտահրավերներին դիմակայելու համար:

- European Parliament
- European Council
- Council of the EU
- European Commission
- Court of Justice of the EU
- European Central Bank
- Court of Auditors

Աուդիտորների եվրոպական դատարան

Աուդիտորների եվրոպական դատարանը ԵՄ հաստատություն է, որի խնդիրը ԵՄ ֆինանսական միջոցների հաշվետուության (աուդիտի) իրականացումն է: Դատարանը հիմնադրվել է 1975 թվականին և տեղակայված է Լյուքսեմբուրգում:

Դատարանը ստուգում է՝ արդյո՞ք հարկատուների վճարած ԵՄ դրամական միջոցները պատշաճ կերպով են հավաքվում և արդյո՞ք օրինականության ու տնտեսման սկզբունքներին համապատասխան նախատեսված նպատակի համար են ծախսվում: Դատարանը, այսպիսով, ջանում է երաշխավորել հարկատուների գումարների արդյունավետ և նպատակային օգտագործումը, և այն իրավունք ունի հաշվետուության ենթարկելու ԵՄ դրամական միջոցների հետ գործունեցող ցանկացած անձի կամ

կազմակերպության: Դատարանն ունի մեկական անդամ ԵՄ յուրաքանչյուր երկրից. նրանք նշանակվում են Խորհրդի կողմից երեք տարի ժամկետով՝ մեկ անգամ վերանշանակվելու հնարավորությամբ: Դատարանի անդամներն իրենց կազմից մեկին ընտրում են նախագահ երեք տարի ժամկետով՝ մեկ անգամ վերընտրվելու հնարավորությամբ: Վիկտոր Մանուել դա Սիլվա Կալդեյրան (Պորտուգալիայից) նախագահի պաշտոնում ընտրվել է 2008թ. հունվարին:

Դատարանի հիմնական խնդիրներն են՝ ստուգել՝ արդյո՞ք ԵՄ բյուջեն ճիշտ է իրականացվում կամ, այլ կերպ ասած, արդյո՞ք ԵՄ-ի եկամուտները և ծախսերն օրինական են, և երաշխավորել կուռ ֆինանսական կառավարում: Փաստորեն, դատարանի աշխատանքն օգնում է ապահովել ԵՄ

համակարգի արդյունավետ և բաց գործունեությունը: Դատարանը խթանում է հաշվետվողականությունն ու թափանցիկությունը և աջակցում է Եվրախորհրդարանին ու Խորհրդին ԵՄ բյուջեի կատարման նկատմամբ վերահսկողություն իրականացնելու գործում:

Իր գործունեությունն արդյունավետ կազմակերպելու նպատակով Հաշվետուագիշերի (աուդիտորների) դատարանը ԵՄ այլ հաստատություններից լիովին անկախ է գործում՝ միաժամանակ մշտական կապ պաշտպանելով նրանց հետ:

Հաշվետուագիշերի դատարանը Եվրամիության ֆինանսական օրենսդրության և ֆինանսական խարդախությունների դեմ պայքարի ԵՄ գործողությունների վերաբերյալ առաջարկների շուրջ իր կարծիքն է ներկայացնում:



Աֆոն՝ վայր առանց կանանց

Եվրոպայի այս հատվածում կեսգիշերը վրա է հասնում մայրամուտին զուգահեռ, իսկ տարածությունը չափվում է ճանապարհին ասված արդթքների բառերի քանակով: Այստեղի բնակիչները միայն տղամարդիկ են և առաջնորդվում են Հուլյան օրացույցով:

Այսպիսին է դրվածքը Հունաստանի հյուսիսում գտնվող Աֆոն կոչվող վանական տեղանքում, ուր հնարավոր է հասնել միայն ծովով, և որտեղ ավելի քան 10 դար արգելված է մարդկության գեղեցիկ կեսի մուտքը:



Հունաստանում այս տարածքի քաղաքական կարգավիճակի անունն է «Սուրբ Լեռան ինքնավար վանական պետություն»: Իրավաբանորեն Աֆոն սուրբ Լեռը գտնվում է Հունաստանի տարածքում, մինչդեռ փաստացի ղեկավարվում է 20 ուղղափառ վանքերի ներկայացուցիչներից ձևավորված «Սրբազան համայնքի» կողմից:

Աֆոնի վանքերում բազմաթիվ գանձեր են պահվում՝ միջնադարյան արվեստի գործեր, սրբապատկերներ, խաչեր, քրիստոնեական վաղ շրջանի տեքստեր, սուրբ մասունքներ և այլն: Մինչև վերջին ժամանակներս ոչ մի արխիվացում այստեղ չի կատարվել, և միայն 1980-ականների վերջերից ԵՄ ֆինանսավորմամբ ձեռնարկվել է այդ ամենի ուսումնասիրությունն ու հավաքագրումը, ինչը կօգնի պահպանել վանքերի գանձերը:

Ըստ Եվրամիության համաձայնագրի՝ Աֆոն լեռը ԵՄ անդամ պետության մի մասն է, միայն թե այն դուրս է ԵՄ ԱԱՀ տարածքից: Իսկ Սուրբ Լեռան տարածք մտնելու խիստ կանոնների պատճառով (խոսքը՝ կանանց մուտքի արգելքի մասին է) Շենգենյան համաձայնագրում այն համարվում է բացառություն:

Լրիվ անվանումը՝ Հունաստանի Հանրապետություն:
Մայրաքաղաքը՝ Աբեն:
Պետական կառուցվածքը՝ Պառլամենտական հանրապետություն:
Տարածքը՝ 131 957 քառ. կմ:
Բնակչությունը՝ 11.2 մլն:
Պետական լեզուն՝ հունարեն:
ԵՄ անդամակցությունը՝ 1981 թ.-ից:

Հասցեն՝ տուն No11, Տալին, Էստոնիա

Էստոնիայի սրտում՝ Տալինի կենտրոնական հրապարակում՝ տուն 11 հասցեում գործում է 600- ամյա պատմություն ունեցող մի դեղատուն, որն իրավամբ համարվում է Եվրոպայի ամենահին դեղատունը: Վերջինիս մասին առաջին գրավոր հիշատակումը վերագրվում է 1422 թվականին, թեև պատմաբանների կարծիքով, այն շատ ավելի վաղեմի պատմություն ունի:



ժամանակի ընթացքում այս պատկառելի տան արտաքինն այդքան էլ չի փոփոխվել, ինչը չի կարելի ասել վաճառվող դեղատեսակների մասին: Ուշ միջնադարում դեղատանը վաճառվում էին ոչ միայն զանազան դեղեր ու թուրմեր, այլև առաջին անհրաժեշտության այլ ապրանքներ ևս՝ թուղթ, թանաք, զմուռ, համեմունքներ, մոմեր և այլն:

Այս դեղատանը մատուցվում էր նաև կլարետա՝ խոտաբույսերի ու եթերային յուղերի խառնուրդով կարմիր գինի, որը Տալինի ազնվականությունը գերադասում էր ամեն տեսակի բուժափեռուկներից՝ էլիքսիրներից և օգտագործում էր դեռևս անհիշելի ժամանակներից: Մեր օրերում էլ ժամանակակից դեղերի վաճառքի կողքին պահպանվում է այդ հին ավանդույթը:

1999-ից դեղատան երկրորդ հարկում գործում է «Բալտագար» կոչվող մի ռեստորան, որտեղ բոլոր ուտեստները պատրաստված են հին ու արդյունավետ դեղամիջոցով՝ սխտորով:

Դեղատունն ունի նաև թանգարան, որտեղ ցուցադրված են 17-20-րդ դարերում օգտագործված դեղամյութեր ու դեղագործական սարքեր:

Լրիվ անվանումը՝ Էստոնիայի Հանրապետություն:
Մայրաքաղաքը՝ Տալին:
Պետական կառուցվածքը՝ Պառլամենտական հանրապետություն:
Տարածքը՝ 45 000 քառ. կմ:
Բնակչությունը՝ շուրջ 1.3 մլն:
Պետական լեզուն՝ էստոներեն:
ԵՄ անդամակցությունը՝ 2004 թ.-ից:

Լեհաստան. ստորգետնյա թանգարան

Լեհաստանի Վելիչկա քաղաքում է գտնվում աշխարհում միակ լեռնաարդյունաբերական աղի հանքը, որն անընդմեջ գործել է յոթ դարի ընթացքում:

Հանքն ուղղահայաց ու հորիզոնական փորվածքներով տարածվում է 57-198 մետր խորության վրա, իսկ միջանցքների ու մեծ սրահների ընդհանուր երկարությունը ավելի քան 200 կմ է:

Ինը հարկերի վրա առկա են տարբեր սրահներ, ստորգետնյա լճեր, վիմափոր խորան, մատուռ, աղից պատրաստված բազմաթիվ

արձաններ, անգամ աղի բյուրեղներից պատրաստված ջահեր: Ստորգետնյա թանգարան հիշեցնող այս հանքում ներկայացված են լեռնահանքային արդյունաբերության զարգացման փուլերը՝ 13-րդ դարից մինչև 20-րդ դարի վերջերը:

Չգրասշրջիկների համար նախատեսված առաջին ճանապարհը դեպի հանք բացվել է դեռևս 19-րդ դարի կեսերին: 1978 թվականին Վելիչկայի աղի հանքն ընդգրկվել է ՅՈՒՆԵՍԿՕ-ի համաշխարհային մշակութային ու բնական ժառանգության ցանկում:

Լրիվ անվանումը՝ Լեհաստանի Հանրապետություն:
Մայրաքաղաքը՝ Վարշավա:
Պետական կառուցվածքը՝ Պառլամենտական հանրապետություն:
Տարածքը՝ 312 679 քառ. կմ:
Բնակչությունը՝ շուրջ 38.1 մլն:
Պետական լեզուն՝ լեհերեն:
ԵՄ անդամակցությունը՝ 2004 թ.-ից:



ԲԱՌԱՐԱՆ

● Միջսահմանային համագործակցություն (ՄՀ) (Cross Border Cooperation (CBC)) ԵՀԶԳ շրջականակներում, միջսահմանային համագործակցություն բաղադրիչը ֆինանսավորում է ծրագրեր՝ միավորելով ԵՄ անդամ պետությունների և ընդհանուր սահման ունեցող գործընկեր երկրների տարածաշրջանները: Այն առնչվում է այնպիսի ընդհանուր մարտահրավերների հետ, ինչպիսիք են արտաքին սահմաններում անվտանգությունը և խրախուսում է տեղական մակարդակով համագործակցությունը: Գոյություն ունեն երկու տիպի ծրագրեր՝ երկկողմ, որոնք ընդգրկում են ընդհանուր ցամաքային սահման (կամ կարճ ծովային անցում) և բազմակողմ, որոնք ընդգրկվում են ծովային ավազանը:

For more information please contact the Delegation of the European Union to Armenia
 21 Frik str, Yerevan, Armenia Entrance from Proshyan str.
 Tel.: (+374 10) 54 64 94, (+374 10) 54 64 95; E-mail: Delegation-Armenia@ec.europa.eu; http://ec.europa.eu/delegations/armenia
 The Newsletter is prepared by SHARM Holding

Լրացուցիչ տեղեկությունների համար դիմել Եվրոպական միության պատվիրակությանը Հայաստանում
 Հայաստան, Երևան, Ֆրիկի փողոց, 21, (մուտքը Պռոշյանի փողոցից)
 Հեռ.՝ (+374 10) 54 64 94, (+374 10) 54 64 95, էլ. փոստ՝ Delegation-Armenia@ec.europa.eu, http://ec.europa.eu/delegations/armenia
 Հաղորդագիրը պատրաստել է ՇԱՐՄ Հոլդինգը